

ԻՇԽԱՆԱՑ ԿՂԶԻՔ



(ՏԽ ԾԱ. յ' էջ 89)

ՆՈՅՆ Բրողի կղզւոյն վանքին մէջը, ուր որ Մ'իքայէլ Ռանկապէն տարեցաւ և մեռաւ, գեղջուկ կրօնաւորներն, որ անտարբեր ականատեսներ էին այս այլ և այլ պատմական մեծ անկմանց, տեսան գրեթէ ճիշտ դար մը վերջը, ուրիշ կայսեր մ'ալ հոն գալն, որ աւելի դառն արկածի մը զոհ կըլլար. այս է Ռոմանոս Լէքարէն որ երեկի զօրապետ մ'եղած էր, և քսանը չորս տարի ոչ առանց փառաց թագաւորելէն վերջը՝ ինկաւ դաւաճանութեամբ մը զոր իր իսկ աղաքը պատրաստած էին: Ռոմանոս առաջ կոստանդին է՛: Պորփիրոսթէնի խնամակալ եղեր էր, ետքը անոր ընկերը և աները եղաւ, վերջապէս ալ ամէն իշխանութիւն ձեռք առած էր, և օրինաւոր կայսրն երկայնատեն միայն անունով թագաւորեց: Գոհ չըլլալով ինք իր կայսրութեանը, իւր երեք տղոցն ալ կայսրութեան տիտղոսն տուաւ. ասոնք էին Ստեփանոս, Փրիտտափոր և Կոստանդին. կայսրութիւնը իր ցեղին մէջ ապահովցնելու չափէ դուրս ջանքն՝ իւր կորստեանը պատճառ եղաւ:

944ին նոր դաւաճանութիւն մը երևան ելաւ, որուն մէջ Պորփիրոսթէն անշուշտ մասն ունեցած է, բայց բուն Ռոմանոսի տղոց գործն էր, որոնք անհամբեր կայսրութիւնը ձեռք ձգել կ'ուզէին: Այս երիտասարդները կ'երենայ. որ այն դիպուածին մէջ խաբուողներն իրենք եղան. որոշած էին որ առաջ Ռոմանոսը բռնեն որ այն ատեն հիւանդ էր:

Օր մը որ ծեր կայսրը մինակ մնացած սրբազան պալատին մեծ սրահը պառկած էր վազրի մարթի մը վրայ, որ իրեն անկողնոյ տեղ կը ծառայէր. ծառաները հեռացուցեր էին. Ստեփանոս կայսրը՝ որ ողջ մնացած տղոցը առջինն էր, յարձրկեցաւ քանի մը օտար զինուորներով. և երբ ծեր կայսրը վարհուրած ոտք ելլալ կ'ուզէր, առանց թոյլ տալու որ հագուի՝ զինքը կապեցին և հաստ լաթի մը մէջ պլնեցին, որուն մէջ չէր կրնար իսկ շարժիլ: Հասկընալով որ եթէ պզտիկ ընդդէմութիւն մ'ընէ զինքը կը սպաննեն, խեղճը մեռելի պէս կեցաւ. այս աւազակաց խումբը այսպէս կապոցի մը պէս լուծեամբ պա-

լատին բակերէն անցուցին. ծովեզերքը նաւակ մը կը սպասէր, Ռոմանոս Լէքարէնը անոր մէջը դրին, և նաւակը առաջաստները բացաւ գէպի Ռրոգի կղզին: Ահաւասիկ ինչպէս յեղափոխութիւնը կը հանդիպէին Բիւզանդիոյ մէջ, և այս կերպով կայսերը աթոռէն վար կ'իջնային:

Մինչդեռ այս յանդուգն դաւադրութեան լուրը իմացուելով պալատն տակն ու վրայ եղած էր, Ռոմանոսի տղոցը ակնկալութեան հակառակ, ժողովուրդը ոտք ելաւ, և կասկածելով թէ Պորփիրոսէն սպաննուած ըլլայ, կը բռնադատէին մեծ ազմով որ Պորփիրոսէնը երեւայ, մինչդեռ նոյն ժամանակ աթոռնկէց կայսրն մտած էր այն վանքն՝ ուր դար մ'առաջ Միքայէլ Ռանկապէն ապրած էր: Խոռցիկ մը կը սպասէր իրեն, շուտով մը մազերը կտրեցին, ուսոցը վրայ կրօնաւորի զգեստ մը ձգեցին, և այն որ ատեն մը առաջ յաղթող զօրապետ մ'եղած էր, և դեռ առջի իրիկունը հինգ կայսերաց առաջինն էր՝ առաւօտուն պարզ աշխատաւոր եղբայր մը եղաւ խեղճ վանքի մը մէջ: Այս յանկարծական փոփոխութիւնը Լէքարէնի վրայ անյուսալի տպաւորութիւն մ'ըրաւ. առաջ անառակ, անհանդարտ, փառասէր, բռնաբարիչ մ'էր, և այն աստիճան առաջին պատիւն ունենալու ետէէ էր, որ քսան և կամ աւելի տարի կոստանդին Պորփիրոսէն կայսրութեան օրինաւոր յաջորդն, իւր մօրը Զոհէի պալատէն հալածուելէն վերջին՝ բանտարկուածի մը պէս էր. և այն աստիճան կոխուած դրամներն միայն Ռոմանոսի գէմբը կը կրեն. երբեմն ալ իւր տղոցը, առանց ամենեւին կոստանդինը յիշելու: Ռոմանոս, կ'ըսեմ, այդ իւր յանկարծական արտօրին վրայ բոլորովին փոխուեցաւ, իւր խոստովանահայրը Սերգիոս, որ երեւելի վարդապետ մ'էր, և երկար ատենէ ի վեր կ'աշխատէր զինքը դարձի բերելու, Բրոգի եկաւ իրեն ետէն: Այս մարդս շատ ժամանակագիր ներէն ամբաստանուած է իբր թէ ինքը եղած էր ակամայ պատուաւ իր խոստովանորդոյն կայսրութենէն ինկնալուն, գուշակելով որ Ռոմանոսին տղաքը Հեղի քահանայապետին տղոցը պէս պիտի սպաննուին: Այս մարգարէութեան վրայ իւր տղաքը վախնալով՝ ուզեցին իրենց հայրը աթոռէն վար ձգելով՝ մարգարէութիւնը պարապի հանել: Ուրիշ եկեղեցական մ'ալ՝ Պողիկտոս, նոյն վանքին վանահայրը, ուր Ռոմանոս փակուած էր, Սերգիոսին հետ միացաւ, երկուքն ալ ամէն ջանքն ըրին զինքը փոփոխու: Առաջի լքումէն վերջը՝ Ռոմանոս կարծուածէն աւելի շուտ ինքն զինք գտաւ, հանդարտութիւն մը և գրեթէ երջանկութիւն մ'ունեցաւ: Բարի օրինակ ըլլալու կրօնաւոր մ'եղաւ. տրտունջ մը, գանգատ մը չըրաւ երբէք իր ապերախտ որդւոցը դէմ: Թէպէտ քիչ ատենէն իրեն վրէժն առնուեցաւ:

Ռումանոսի անկմանէն երեսունըվեց օր վերջը Պորփիրոսէն յանկարծ ինքզինքը ցուցուց իւր կնոջը խորհրդով, որ Լէքաբենի քոյրն էր։ Կայսրական սեղանին վրայ երկու Մակեդոնացի զօրաց բռնել տուաւ իւր աներձագերը, որք միշտ իրեն դէմ դաւադրութիւն կ'ընէին. և ինչ որ իրենց հօրն ըրած էին, անակ ալ իրենց ըրաւ. մագերնին կտրել տուաւ, կրօնաւորեցուց և աքսորեց. մէկը Անդրիկոն խաւրեց, միւս՝ ալ Անդրովիտոս։ Երթալնէն առաջ իրենց հայրը տեսնելու հրաման ընդունեցան։ Տխուր տեսարան՝ մը եղաւ վանաց հիւրանոցին մէջ, այս երեք անկեալ կայսերաց զիրար տեսնալն, երեքն ալ կրօնաւորի պեմով. կը կտրծուի թէ Կոստանդին մտածած էր տղաքը իրենց հօրը բանտը դնել, բայց Ռումանոս իրեն աղաչեց որ տղաքը իրեն քով չի ձգէ, որոնք պալատին մէջը չէին ուզած զինքը իրենց քովը։

Ըստ բիւզանդական պատմագրաց երիտասարդ կայսերք երբ իրենց հայրը այնպէս խեղճ պահատուց տակ տեսան, սկսան լալ, և իւրքն ալ սրտին վրայ զիրենք սեղմելով իրենց վրայ լացաւ և հառաչեց ինչպէս մարգարէն. « Որդիս ծնայ և բարձրացուցի և նոքա զիս անարգեցին »։ Իսկ ընդ հակառակն Լիւիդիան որ ժամանակակից պատմագիր մ'է, գոնէ այս արդիւնքն ունի, կ'ըսէ Ռամպոյ, որ շարունակ չդիւցազնացըներ իւր անձինքն. կը պատմէ թէ Ռումանոս, երբ լսեց իւր տղոցը անկումը՝ Աստուծոյ փառք տուաւ, և իրենց առջևը վագելով շարամիտ ընդունելութիւն մ'ըրաւ անոնց, իբր կրօնակից զիրենք բարեկեղծ. ինչպէս որ աստն մը աթոռակից ըրեր էր զանոնք. և կայսերական թագին տեղ անոնց հրամցուց իւր մագուր ջուրը, սև հացը և թարմ բակլան և իւր կանանչեղէններն հասարակ կերպով պատրաստուած։

Կոստանդին հրամայեւ էր որ տեսութիւննին կարճ ըլլայ. երկու իշխանները աքսոր դացին, ուր երկուքն ալ պիտի մեռնէին բռնական մահուամբ, մէկը երեք տարի վերջը, միւսը շատ վերջը։ Իսկ Լէքաբէն հանգիստ ապրեցաւ 'ի Բրոդի իւր ժայռին վրայ, միշտ կրկնելով իր եղբայրակից կրօնաւորաց, թէ աւելի ճշմարտութեամբ թագաւոր կը սեպէր զինքը Աստուծոյ ծառայիցը ծառայելով, քան թէ իրմէն աւելի գէշ ծառաներու հրամայելով։ Մոլեռանդն բարեպաշտութիւն մ'ունէր, բնութեամբ աւելորդապաշտ էր. այն գիշերը որ իր Կոստանդին տղան սպաննուեցաւ իր պահապաններէն Սամութրակէ կղզւոյն մէջ, երազին մէջ տեսաւ խեղճին դժոխք իջնալը, և այն աստիճանի վախցաւ որ պէտք սեպեց Երուսաղեմայ պատրիարքին և հովովմայ պապին դեսպան զրկել և իրենց աղօթքն խնդրել մեռելոյն հոգւոյն համար։

Ուզելով միանգամայն հրապարակական ապաշխարութիւն մ'ը-

նիւ, ամէն վանքերուն կրօնաւորները Բրողի հրաւիրեց: Այս կայսեր խոստովանութիւնը շատ հետաքրքրական է և աղէկ կը ցուցնէ այն դարը:

Երեք հարիւր կրօնաւորք ընդունեցան կրօնաւոր կայսեր հրաւերը, բոլոր կղզեացն և Բիւթանիոյ ծովեզերացը և Ոլլմպոս լեռան կողերուն վրայ շինուած վանքերէն, դարձեալ սուրբ Աքսին տիոս լեռան վրայի միայնակեցաց մեծ վանքէն, Բլադիի խցիկնեւրէն և Վոսփորի ծովեզերաց վանքերէն եկան ժողովուեցան այս Բրողիի վանքը: Հանդիսաւոր պատարագ մ'ըսուեցաւ, հաղորդութենէ առաջ ապաշխարող կայսրը զգեստը հանելով՝ շապկանց կեցաւ եկեղեցւոյն մէջ տեղը, և կարդաց բարձր ձայնով գրութիւն մը, որ իւր բոլոր խոստովանութիւնն էր: Ժամանակագիրը զանց կ'ընէ ըսելու թէ քսան տարիէն 'ի վեր գործած յանցանաց խոստովանութիւնը ամբողջ էր արդեօք. բայց ամէն մէկ խոստովանութեան՝ կրօնաւորք լալով միաբան կ'ըսէին. « Տէր, ողորմեա իրեն »:

Վերջը Ռոմանոս ամէն կրօնաւորաց գիմաց ծունկ դնելով իւրաքանչիւրէն զատ զատ արձակումն առաւ, և այնպէս հաղորդութեան մօտեցաւ: Ապա երբոր ամէն կրօնաւորք սեղանատուն մտան, այս ապաշխարող խոտացեալ մեղաւորն ուզեց ձաղկիլ հասարակաց գիմաց մէկ խեղճ տղէ մը, որուն սորվեցուցած էր իրեն կրկնելու ամէն մէկ հարուածին. « ողորմելի ծեր, սեղան նստէ »: Բոմանոս սեղան նստաւ. երբ ամէնը կերակուրնին լըմըցան, ամէն մէկ պատառին բարձր ձայնով հառաչելով կերակուրը կերաւ: Իւր խոստովանութեան մէկ մէկ օրինակ իւր ստորագրութեամբը և կնքովն վաւերացեալ, խրկեց այն ամէն կրօնաւորաց՝ որք չէին կրցեր գալ այս հանդիսիս, շատ աղաչանքով որ այն աղօթքները ըլլուի իրեն համար, ինչ որ իշխանաց համար կ'ըսուէր: Այս ամէն արարողութիւնքը թէպէտ մեզի տղայական կ'երեան, բայց բիւզանդացիք մեծ կարեւորութիւն կուտային. միանգամայն շատ մը հիւրեր որք մայրաքաղաքէն կուգային ղրոմանոս տեսնելու՝ կը զբօսեցնէին այս ակամայ կրօնաւորն որով թշուառութիւնը կը թեթեւաւոր վանքին մէջ բոլոր կրօնաւորները հետը յարգութեամբ կը վարուէին, և զինքը կը զբաղեցնէին, վարժուած ըլլալով Բիւզանդիոյ խոսովութեանցը ամէն անկարծելի գիպուածոց, Բրողիի վանքին մէջ քառասուն տարի քաշուած ապրեցաւ, և հոն մեռաւ 15 Յուլիս 948: Պորփիրոսէն կ. Պօլիս բերել տուաւ իւր մարմինը, ուր իւր շինած վանքին մէջ թաղուեցաւ:

Շարունակելի